ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Լսվել է ԱԿՀ բաժնի թիվ 3 նիստում (05 դեկտեմբեր, 2018թ)

և երաշխավորվել է ներկայացնելու գիտական խորհրդին

Արտաքին կապերի և համագործակցության բաժնի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017-2018 ուստարի

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

2017-2018 ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետվություն

Հաշվետու ժամանակահատվածը հատկանշական էր այն առումով, որ բաժինը, որ դեռևս մինչև 2018թ-ի օգոստոսի 31-ը գործում էր ԿՈԱՄՀ կենտրոնում, ԳՊՀ գիտական խորհրդի որոշումով առանձնացվել է և գործում է որպես առանձին ենթակառուցվածք՝ արտաքին կապերի և համագործակցության բաժին:
Բաժնի գործառույթները և ընթացակարգերը հստակեցնելու նպատակով մշակվել, քննարկվել և 2018թ-ի հունիսի 15-ին գիտխորհրդի կողմից հաստատվել է արտաքին կապերի և համագործակցության բաժնի կանոնակարգը:
2017-2018 ուստարվա ընթացքում բաժինը հաջողությամբ շարունակել և իրականացնել է 2 միջազգային ծրագիր՝ .«Էրազմուս+ LNSS «Գրադարանային ցանցի աջակցության ծառայություններ. Գրադարանների արդիականացում Հայաստանում, Մոլդովայում և Բելառուսում՝ գրադարանների անձնակազմի զարգացման և գրադարանային ծառայությունների բարեփոխումների միջոցով» և HERITAG (Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ զբոսաշրջության կառավարման և կիրառական երկրատեղեկատվության ոլորտների ուսումնական ծրագրերում):

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում LNSS ծրագրի շրջանակներում տեղի ունեցած միջոցառումներ և դասընթացներ

Էրազմուս+ LNSS ծրագրի շրջանակներում **2017թ-ի սեպտեմբերի 24-30-ը** ծրագրի համակարգող Ն, Սաֆարյանը գործուղվել է Կրետեի Ռեթիմնոն քաղաք՝ մասնակցելու «Որակի ապահովում» դասընթացին, որը տեղի է ունեցել Կրետեի համալսարանի գրադարանում: Արդյունքում ստեղծվել է գրադարանային ֆոնդի հարստացման ռազմավարության անգլերեն տարբերակը:

2017 նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 10-ը Գորիսի պետական համալսարանում LNSS ծրագրի շրջանակներում իրականացվել է մոդուլ 4-ը՝ <<Տեղեկատվական գրագիտություն և հետազոտական հմտություններ>>պիլոտային դասընթացը, որին ԳՊՀ-ից և համայնքային գրադարաններից մասնակցել են 24 հոգի և ստացել դասընթացի մասնակցության հավաստագրեր:

2018թ-ի ապրիլի 5-ին Էրազմուս+(LNSS) ծրագրի շրջանակներում ՀՀ պետական կառավարման ակադեմիայում տեղի ունեցավ ծրագրի հերթական մշտադիտարկման հանդիպումը: ԳՊՀ-ից հանդիպմանը ներկա էին ծրագրի համակարգող Ն. Սաֆարյանը, աշխատանքային խմբի անդամներ Մաթեմատիկայի ամբիոնի դասախոս Ա. Օրդյանը, ԳՊՀ գրադարանի վարիչի ժ/պ Ն. Շալունցը և Մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ Ա. Դինունցը: ՀՀՊԿԱ-ից հանդիպմանը մասնակցում էին ՊԴ և վարչական աշխատակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ: Մշտադիտարկումն իրականացնում էին Էրազմուսի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչներ Լ. Կառլովան և Է. Սողոմոնյանը: ԳՊՀ-ում ծրագրի համակարգող Ն. Սաֆարյանը ներկայացրեց ծրագրի շրջանակներում ԳՊՀ-ում իրականացված աշխատանքների՝ մասնավորապես ԳՊՀ-ի կողմից մշակված երկու մոդուլների պիլոտային դասընթացների՝ Ազգային իրազեկման օր (3 մայիսի, 2017թ. և առաջիկա՝ հունիս 1, 2018թ.), ծրագրի որակական և քանակական շոշափելի վերջնարդյունքների ու ԳՊՀ գրադարանի վրա դրանց դրական ազդեցության, սարքավորումների ձեռքբերման և այլ հարցեր: Ա. Օրդյանը և Վ. Շալունցը ներկայացրեցին ԳՊՀ գրադարանի թվայնացման և KOHA կառավարման համակարգի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացման վերաբերյալ տեղեկություններ: Ա. Դինունցը հանգամանալից ներկայացրեց ԳՊՀ-ում LNSS ծրագրի դրական արդյունքների և ազդեցության մասին փաստեր:

2017թ. մայիսի 31-հունիսի 1-ը Գորիսի պետական համալսարանում Էրազմուս+ (LNSS) ծրագրի տեղի ունեցավ **Գրադարանների ազգային իրազեկման օրվան նվիրված աշխատաժողով**, որին մասնակցեցին LNSS ծրագրի մասնակից հայաստանյան բուհերի ներկայացուցիչները, եվրոպական գործընկերները, ինչպես նաև Սյունիքի մարզային և քաղաքային գրադարանների աշխատակիցները:
Մայիսի 31-ին «Ինչպես դառնալ ավելի լավ դասախոս՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները» խորագրով վարպետության դաս ներկայացրին ԵՄ փորձագետներ Անջելա Ռեպանովիչին (Բրաշովի Տրանսիլվանիա համալսարան՝ Ռումինիա) և Մանոլիս Կուկուրակիսը (Կրետեի համալսարան՝ Հունաստան):
Հունիսի 1-ին Գորիսի պետական համալսարանի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև կնքվեց համագործակցության պայմանագիր, որի նպատակն է կրթության և գիտության ոլորտում համատեղ փոխշահավետ ծրագրերի մշակումն ու իրականացումը:

Հունիսի 4-5-ը Էրազմուս+ (LNSS) ծրագրի շրջանակներում Գորիսի պետական համալսարանում անկացվեց «Անգլերենը որպես դասավանդման միջոց)» խորագրով երկօրյա վերապատրաստման դասընթաց երկու առանձին խմբերի՝ սկսնակների և միջին մակարդակի համար, որին մասնակցեցին համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական աշխատակազմի ներկայացուցիչներ ուգրադարանավարներ: Շուրջ 40 մասնակից ստացան դասընթացի մասնակցության հավաստագրեր:



2018թ. հոկտեմբերի 2-5-ը Մոլդովայի Քիշինյով քաղաքի պետական կառավարման ակադեմիայում կայացել է Էրազմուս+ (LNSS) ծրագրի գործունեության **ամփոփիչ համաժողովը**, որին մասնակցում էին ծրագրի կոնսորցիումի անդամ երկրների /Հայաստան, Մոլդովա, Բելառուս, Գերմանիա, Իռլանդիա, Հունաստան, Ռումինիա /կրթական և այլ գործընկեր հաստատությունների, Մոլդովայում Հայաստանի դեսպանատան ու Էրազմուս գրասենյակի ներկայացուցիչներ և այլ հյուրեր: Գորիսի պետական համալսարանը ներկայացնում էին ծրագրի համակարգող Ն. Սաֆարյանը, ԳՊՀ գրադարանի վարիչի պաշտոնակատար Ն. Շալունցը և գրադարանի աշխատակից Ա. Ղազարյանը:

ԳՊՀ-ում ծրագրի համակարգող Ն. Սաֆարյանը մասնավորապես անդրադարձավ ծրագրի համաֆինանսավորման շրջանակներում վերանորոգված և ծրագրի միջոցներով ձեռքբերված սարքավորումներով հագեցած ընթերցասրահի առկայության կարևորությանը, որը հնարավորություն է ստեղծել բարելավել գրադարանային ծառայությունները, թվայնացնել հավաքածուներն ու ինտեգրվել ազգային և միջազգային գրադարանային ցանցերին: Նա նաև խոսեց ծրագրի շնորհիվ ԳՊՀ-ի գրադարանի և դրա ծառայությունների մասին բարձր իրազեկվածության, համայնքային և մարզային այլ գրադարանների հետ սերտ կապերի ու համագործակցության համար առկա բարենպաստ պայմանների և նախադրյալների առկայության մասին: Բազմազան վերապատրաստումները ծրագրի շրջանակներում նպաստեցին ոչ միայն ԳՊՀ-ի դասախոսական, վարչական և գրադարանի աշխատակազմի ներկայացուցիչների, այլև համայնքային գրադարանների աշխատակիցների շրջանում համապատասխան մասնագիտական հմտությունների ու գիտելիքների ձևավորմանը և գրադարանային գործի զարգացմանը տարածաշրջանում:

2018թ. հոկտեմբերի 5ին ԵՄ Արևելյան գործընկերության անդամ երեք երկրների՝ Հայաստանի, Բելառուսի ու Մոլդովայի ինը բուհի գրադարանների ղեկավարների միջև կնքվեց գործընկերության և համագործակցության հնգամյա հուշագիր, որը ենթադրում է Հայաստանի, Մոլդովայի և Բելոռուսի միջև գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում հետագա համագործակցության խթանում, տեղեկատվական գրագետ հասարակության ձևավորում, համալսարանական գրադարանների աշխատակիցների մասնագիտական հմտությունների ու գրադարանային ծառայությունների զարգացում և գրադարանների միջև լավագույն փորձի փոխանակում:

LNSS ծրագրի շրջանակներում ԳՊՀ-ում իրականացված աշխատանքներ

67 մասնակիցներ /ԳՊՀ գրադարանավարներ, դասախոսական ու վարչական աշխատակազմի և համայնքային գրադարանների ներկայացուցիչներ/ վերապատրաստվել են ծրագրի 12 դասընթացներում

Ստեղծվել է գրադարանի խորհուրդը և ԳՊՀ գրադարանի ֆոնդի հարստացման ռազմավարական պլանի նախագիծը

Մշակվել են մոդուլ 1-ը-ԱՆԳԼԵՐԵՆ՝ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ (ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ, ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ և ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ Մոդուլ 4-ը- ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ իրականացվել են 2 պիլոտային դասընթացներ

Ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածման նպատակով պատրաստվել են գովազդային բազմապիսի նյութեր /բրոշյուրներ, պաստառներ, լուսանկարների ստենդեր / և շուրջ 16 երկլեզու նյութ տեղադրվել է ԳՊՀ-ի և ծրագրի պաշտոնական կայքերում, ԳՊՀ-ի և մարզային պաշտոնական թերթերում:

Համաֆինանսավորման շրջանակներում վերանորոգվել է ԳՊՀ գրադարանի ընթերցասրահը և սպասարկման սրահը, ծրագրի միջոցներով ձեռք են բերվել 22000 եվրո արժողությամբ նորագույն սարքավորումներ/ համակարգիչներ, պատճենահանման , տեսածրման սարքեր, էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակ, ինտերնետային կապի ապահովման սարքավորում/ և տեղադրվել գրադարանի ընթերցասրահում

Կազմակերպվել և իրականացվել են Ազգային իրազեկության 2 օր- (3 մայիսի, 2017թ և 1 հունիսի, 2018)

TPG (Գերմանիա) գործընկերը և ԳՊՀ-ի ծրագրի համակարգողի կողմից, ովքեր պատասխանատու են ծրագրի գործողությունների և ձեռքբերումների լուսաբանման և տեղեկատվության տարածման համար, պատրաստվել և ծրագրի կայքում տեղադրվել է երեք երկրի բուհերի աշխատանքների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը:

Պատրաստվել և ներկայացվել են ծրագրի միջանկյալ և վերջնական տեխնիկական և ֆինանսական հաշվետվությունները:

Ծրագրի պաշտոնական ավարտը տրվել է 2018թ-ի հոկտեմբերի 15-ին:

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում HERITAG ծրագրի շրջանակներում տեղի ունեցած միջոցառումներ և դասընթացներ

2017թ-ի սեպտեմբերի 26 – 28-ը Erasmus+ HERITAG ծրագրի շրջանակներում Շ.Ռուսթավելու անվ. Բաթումիի պետական համալսարանում տեղի է ունեցել «Որակի ապահովումը բարձրագույն կրթության համակարգում» դասընթաց և ծրագրի կառավարման հերթական չորրորդ հանդիպում, որին ԳՊՀ-ից մասնակցել են Գ. Մինասյանը և Թ. Օհանյանը: Քննարկումներ են եղել սարքավորումների ձեռքբերման և տեղադրման, լաբորատորիաների բացման, աշխատաշուկայի/կարիերայի օրվան նվիրված միջոցառումների, կրթական ծրագրերի բարեփոխման, առարկայական ծրագրերի և դրանց բովանդակության, շարունակական կրթության մոդուլների ստեղծման և արտաքին գնահատման վերաբերյալ:

2018թ. փետրվարի 12-14-ը Erasmus + Heritage (Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ զբոսաշրջության կառավարման և կիրառական երկրատեղեկատվության ոլորտների ուսումնական ծրագրերում) ծրագրի շրջանակներում Երևանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանում տեղի ունեցան ծրագրի որակի հսկողության հանդիպումներ, որոնց նպատակն էր վերլուծել նախագծի առաջին երկու տարվա ընթացքում կատարված աշխատանքները, արդյունքները ու ստանալ արտաքին կոմիտեից ստացված արձագանքները վերջին մեկ տարվա ընթացքում մնացած գործողությունների լավ պլանավորման համար:

2018թ-ի մայիսի 14 – 16-ը Գորիսի պետական համալսարանում տեղի ունեցավ եռօրյա աշխատաժողով «Դասավանդման նոր մեթոդներ» թեմայով:

Աշխատաժողովին ներկա փորձագետների կողմից ներկայացված նյութերը վերաբերում էին բարձրագույն կրթության մեջ կիրառվող դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդներին: Առանձին դասընթացների միջոցով ներկայացվեցին մեթոդական ուսումնասիրություններ զբոսաշրջության կառավարման և կիրառական երկրատեղեկատվական համակարգերի մասնագիտական ոլորտների կրթական ծրագրերում արդյունավետ կիրառվող խնդրահենք, նախագծահենք և ինտերակտիվ ուսուցման ու դասավանդման մեթոդներ: Գործընկեր համալսարանների փորձագետները անդրադարձան այդ մեթոդների ներդրման և կիրառման լավագույն և արդյունավետ օրինակներին ու փորձին: Քննարկումների ընթացքում մասնագետները ներկայացրեցին իրենց համալսարաններում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների ներդրման արդյունքները, ինչպես նաև անդրադարձան այդ մեթոդների ներդրման հետ կապված հետագա ծրագրերին և խնդիրներին:

Դասընթացները նախատեսված էին ԳՊՀ-ի և ծրագրի գործընկեր հաստատությունների պրոֆեսորադասախոսական ու վարչական աշխատակազմերի ներկայացուցիչների համար: Շուրջ 35 մասնակից ներկա էին դասընթացին և ստացան հավաստագրեր:





2018թ-ի մայիսի 14-ին ԳՊՀ-ում տեղի ունեցավ երկրատեղեկատվական համակարգերի լաբորատորիայի պաշտոնական բացումը, որին ներկա էին դասընթացի մասնակիցները, ԳՊՀ-ի վարչական ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, համայնքապետարանի, տեղական ՋԼՄ և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
GIS լաբորատորիան ունի անհրաժեշտ սարքավորումներ երկրատեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների կիրառմամբ մշակութային ժառանգության և զբոսաշրջության վերաբերյալ տվյալների հավաքագրման, քարտեզագրման, ինչպես նաև ուսանողների և ոլորտի մասնագետների համար դասընթացների կազմակերպման համար:



2018թ-ի դեկտեմբերի 10-21-ը գիտակրթական բարեփոխումների հիմնադրամի (SERF) փորձագետ Մ. Ավետիսյանը «Զբոսաշրջության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի ուսանողների և ԳՊՀ դասախոսական աշխատակազմի համար իրականացրել է «Երկրատեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը զբոսաշրջության մեջ» դասընթացներ՝ համապատասխան ծրագիրը համակարգիչներում տեղադրելուց հետո:



2018թ-ի դեկտեմբերի 19-ին ԳՊՀ-ի GIS լաբորատորիակում տեղի ունեցավ աշխատաշուկա – կարիերայի օր՝ նվիրված զբոսաշրջության զարգացման խնդիրներին և հեռանկարներին «Զբոսաշրջության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման, զբոսաշրջության մեջ երկրատեղեկատվական համակարգերի կիրառման և կրթական ծրագրերին արտաքին և ներքին շահակիցների կողմից ներկայացվող պահանջների և առաջարկների ուսումնասիրությանը:

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում մշտադիտարկման և ծրագրերի կառավարման խորհուրդների հանդիպման նպատակով պարբերաբար Հայաստան են ժամանել ծրագրերի եվրոպական գործընկերները՝ Բրաշովի Տրանսիլվանիա համալսարանի (Ռումինիա) պրոֆեսոր Ա. Ռեպանովիչին, Կրետեի համալսարանի (Հունաստան) պրոֆեսոր Մ. Կուկուրակիսը ,Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանի պրոֆեսոր Լուիս Ֆերնանդեսը(Իսպանիա) և Կրթության, առդիովիզուալ և մշակույթի գործադիր գործակալության ներկայացուցիչներ, որոնք ներկայացրել են համապատասխան զեկույցներ: ԳՊՀ-ի ներկայացուցիչները մասնակցել են նաև Էրազմուսի ազգային գրասենյակի կազմակերպած Տեղեկատվական օրերի միջոցառումներին:

2018թ. նոյեմբերի 6-ին և 7-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում տեղի ունեցան հերթական Էրազմուս+ Տեղեկատվական օրերը Հայաստանում:

Առաջին անգամ Էրազմուս+ տեղեկատվական օրերի շրջանակներում Երևանում կազմակերպվեց պանել քննարկում ԿԳՆ ներկայացուցիչների և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Գավառի պետական համալսարանի և Գորիսի պետական համալսարանի ռեկտորների հետ:

2018թ. նոյեմբերի 16-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում տեղի ունեցավ (LNSS, HARMONY, BOOST, INCLUSION, C3QA, e-DRONE) և ավարտված Տեմպուս ծրագրերի (PEOPLE, PICASA, ALIGN, GOVERN, VERITAS, ESPAQ, TNE-QA) կլաստերային հանդիպում ուղղված ինստիտուցիոնալ կառավարման բարեփոխումներին և հիմնախնդիրներին, որի նպատակն էր ներկայացնել ներդրված կառուցվածքների և կանոնակարգերի փաստացի կիրառումը, նպաստել գիտելիքի փոխանակմանն ու ծրագրերի միջև փոխգործակցության խթանմանը, բացահայտել լավագույն փորձը և հաղթահարել ծառացած խոչընդոտները, խուսափել կրկնություններից,

բարձրացնել շահագրգիռ կողմերի իրազեկվածության և Էրազմուս+ ծրագրի ընդհանուր տեսանելիության ու ազդեցության մակարդակը:

Յուրաքանչյուր եվրոպական և հայաստանյան գործուղումից հետո բաժնի կողմից ներկայացվել է մանրամասն հաշվետվություն իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Համալսարանի պաշտոնական կայքում https://gorsu.am/, պաշտոնաթերթում և Facebook-ի էջում շարունակաբար տեղադրվել է թարմ տեղեկատվություն միջազգային ծրագրերի շրջանակներում կազմակերպված և իրականացված միջոցառումների ու դասընթացների մասին:

ԱԿՀ բաժնի ղեկավար Նաիրա Սաֆարյան

05.12.2018